Արթուր Եահնաղարեան

Նարեկան խաչագրեալ



www.naregatsi.org

«...Հին խազերը՝ որոնք, անշուշտ,
աւելի խօսուն են՝ մեռած լինելով,
քան մեր այղի մեռած ձայնանիշերը»:

Կոմիտաս



"...The old khazes,
though defunct,
are no doubt more eloquent
than the lifeless modern notation we presently use."

Komitas

www.naregatsi.org

Արթուր Շահնազարեան

ՀԱՐԱԿԱՆ ԽԱՂԱՓՐԵԱԼ

Խազերից վերծանուած միջնադարեան տասներկու շարական եւ նոյն շարականների բանաւոր պահպանուած օրինակները

Հայաստանի պետական կամերային երգչախումբ

Գեղարուեստական ղեկավար և դիրիժոր՝

Ռոբերտ Մքէյեան

Նարեկացի արուեստի մխութիւն
Երեւան, 2013

www.naregatsi.org

ՀՏԴ 783
ԳՄԴ 85.314
Շ 212

ՎԱՉԷ ՊԱՐՍՈՒՄԵԱՆԻ
խմբագրութեամբ և անգլերէն թարգմանութեամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄԵՐԱՅԻՆ ԵՐԳԱԽՄԲԻ
կատարմամբ (խմբավար՝ Ռոբերտ Մլքէեան)

Շահնազարեան Ա.

Շ 212 Շարական խազագրեալ: Խազերից վերծանուած միջնադարեան տասներկու շարական և նոյն շարականների բանաւոր պահպանուած օրինակները: Երաժշտագիտական մենագրութիւն, ձայնասկաւառակ, նոտագիրք: /Արթուր Շահնազարեան; խմբ.՝ Վաչէ Պարսումեան – Եր.: Նարեկացի արուեստի միութիւն, 2013. – 120 էջ:

17-18-րդ դդ. ի վեր անվերծանելի է համարուել հայ միջնադարեան հոգեւոր երաժշտութեան գրանցման՝ խազագրութեան իմաստը: Տասնամեակներ շարունակ կորած են համարուել նաեւ Կոմիտասի խազաբանական ուսումնասիրութիւնները՝ խազերի վերագտած բանալին:

1987 թ. Կոմիտասի խազաբանական ձեռագրերը հայտնաբերելով Չարենցի անուան գրականութեան ինստիտուտում՝ երաժշտագէտ, կոմպոզիտոր Ա. Շահնազարեանը կատարել է գիտական ծաւալուն ուսումնասիրութիւն եւ, էապես զարգացնելով խազագիտութիւնը, ի վերջոյ ներկայացրել է պարզ խազերի վերծանութիւնները:

Տրուած է 12 շարականի վերծանութիւն եւ, համեմատութեան համար, նոյն շարականների բանաւոր պահպանուած օրինակներն ըստ Ն. Թաշճեանի 19-րդ դ. գրանցման: Շարականների խազաւոր վերծանուած բնօրինակներն ու բանաւոր պահպանուած օրինակները ներկայացուած են ժամանակակից նոտագրմամբ եւ հնչում են ներամփոփ ձայնագրութեան մէջ:

By the 17th – 18th c. the notation system of *khazes* (neumes) used for transcribing medieval Armenian spiritual music was no longer decipherable. Also Komitas' neumological studies – the re-obtained key to medieval *khazes* – were widely considered as lost.

Discovering Komitas' neumological manuscripts in the archives of the *Charents Museum of Literature* in 1987, musicologist, composer Arthur Shahnazarian studies them in subsequent years and eventually finds the key to decoding the simple *khazes* in this important contribution to modern neumology.

12 *sharakans* as deciphered from neumes are offered in the publication alongside their more familiar forms transcribed from the oral tradition by N. Tashjian in the 19th c.. Both the decoded and the orally preserved versions of the *sharakans* are presented in modern notation system, as well as in the accompanying recording.

ՀՏԴ 783

ISBN 978-9939-9085-0-2
ISMN 979-0-69380-012-4

© Ⓟ Նարեկացի արուեստի միութիւն, 2013
Naregatsi Art Institute, 2013
© Ⓟ Շահնազարեան Ա., 2013
Shahnazarian, A., 2012

www.naregatsi.org

Artur Shahnazarian

KHAZ-NOTATED *SHARAKANS*

Twelve medieval sharakans as deciphered from neumes (khazes)
and the same sharakans as transcribed from oral tradition

The State Chamber Choir of Armenia

Artistic director and conductor:

Robert Mlkeyan

Naregatsi Art Institute
Yerevan, 2013

www.naregatsi.org

Ա. Փալատն հանդերձ կառօքն (Բկ). Ստեփաննոս Սիւնեցի Ա, V դ.

1. Խազաւոր բնօրինակը 2:04
2. Բանաւոր օրինակը. խմբերգ 0:43
3. Բանաւոր օրինակը. մեներգիչ՝ Յովսէփ Նշանեան 0:45

Բ. Հաստատեցաւ սիրտ իմ ի Տէր (Բծ). Ստեփաննոս Սիւնեցի Ա, V դ.

4. Խազաւոր բնօրինակը 1:32
5. Բանաւոր օրինակը. խմբերգ 0:42
6. Բանաւոր օրինակը. մեներգիչ՝ Վահէ Բեգոյեան 1:17

Գ. Պարծանք եկեղեցւոյ (Բծ). Մովսէս Խորենացի, V դ.

7. Խազաւոր բնօրինակը 1:58
8. Բանաւոր օրինակը. խմբերգ 1:16
9. Բանաւոր օրինակը. մեներգիչ՝ Վրէժ Ղարիբեան 0:37

Դ. Անոխակալ եւ բարեգութ (Բծ). Պետրոս Գետադարձ, XI դ.

10. Խազաւոր բնօրինակը 2:20
11. Բանաւոր օրինակը. խմբերգ 1:21
12. Բանաւոր օրինակը. մեներգիչ՝ Վահէ Բեգոյեան 0:46

Ե. Որ ի հօրէ առաքեալ (Դկ). Յովհաննէս Երզնկացի, XIII դ.

13. Խազաւոր բնօրինակը 1:31
14. Բանաւոր օրինակը. խմբերգ 0:54
15. Բանաւոր օրինակը. մեներգիչ՝ Արէն Աւետեան 0:55

Զ. Որ արարիչդ ես արարածոց (Դկ)

16. Խազաւոր բնօրինակը 1:36
17. Բանաւոր օրինակը. խմբերգ 1:15
18. Բանաւոր օրինակը. մեներգիչ՝ Արթուր Մարկոսեան 0:42

Է. Որ թագաւորդ ես թագաւորաց (Բծ)

19. Խազաւոր բնօրինակը 3:04
20. Բանաւոր օրինակը. խմբերգ 1:24
21. Բանաւոր օրինակը. մեներգիչ՝ Վահէ Բեգոյեան 1:21

Ը. Յաւուրց վերջին ժամանակի (Բծ). Յովհաննէս Երզնկացի Պլուզ, XIII դ.

22. Խազաւոր բնօրինակը 1:59
23. Բանաւոր օրինակը. խմբերգ 0:53
24. Բանաւոր օրինակը. մեներգիչ՝ Արէն Աւետեան 0:53

Թ. Ով երջանիկ տէր Գրիգոր (Բկ). Մովսէս Խորենացի, V դ.

25. Խազաւոր բնօրինակը 1:13
26. Բանաւոր օրինակը. խմբերգ 1:16
27. Բանաւոր օրինակը. մեներգիչ՝ Արէն Աւետեան 1:18

www.naregatsi.org

Ժ. Որ պատուիլեան ճշմարտութեան (Բկ). Ներսէս Շնորհալի, XII դ.

28. Խազաւոր բնօրինակը 1:45
29. Բանաւոր օրինակը. խմբերգ 0:54
30. Բանաւոր օրինակը. մեներգիչ՝ Յովսէփ Նշանեան 0:58

ԺԱ. Հայր անսկիզբն (Բձ). Բարսեղ Ճոն, VII դ.

31. Խազաւոր բնօրինակը 1:57
32. Բանաւոր օրինակը. խմբերգ 1:05
33. Բանաւոր օրինակը. մեներգիչ՝ Յովսէփ Նշանեան 0:57

ԺԲ. Քրիստոս Աստուած, որ առաւել քան (Դկ)

34. Խազաւոր բնօրինակը 5:22
35. Բանաւոր օրինակը. խմբերգ 1:01
36. Բանաւոր օրինակը. մեներգիչ՝ Վրէժ Ղարիբեան 0:49

Բանաւոր օրինակները կատարում են ըստ Նիկողայոս Թաշճեանի (1841-1885) գրանցման:
Ձայնագրեալ շարական հոգեւոր երգոց, Վաղարշապատ, 1875:

www.naregatsi.org

I. Paravon Handerdz Karoqn (B-k): Stepanos Siunetsi A, 5th c.

1. As Decoded from Ancient Neumes 2:04
2. As Transcribed from Oral Tradition (Choir) 0:43
3. As Transcribed from Oral Tradition (Solo: Hovsep Nshanian) 0:45

II. Hastatetsav Sirt Im I Ter (B-dz): Stepanos Siunetsi A, 5th c.

4. As Decoded from Ancient Neumes 1:32
5. As Transcribed from Oral Tradition (Choir) 0:42
6. As Transcribed from Oral Tradition (Solo: Vahe Begoyan) 1:17

III. Partzanq Yekeghetsvoy (B-dz): Movses Khorenatsi, 5th c.

7. As Decoded from Ancient Neumes 1:58
8. As Transcribed from Oral Tradition (Choir) 1:16
9. As Transcribed from Oral Tradition (Solo: Vrezh Gharibian) 0:37

IV. Anokhakal Yev Baregut (B-dz): Petros Getadardz, 11th c.

10. As Decoded from Ancient Neumes 2:20
11. As Transcribed from Oral Tradition (Choir) 1:21
12. As Transcribed from Oral Tradition (Solo: Vahe Begoyan) 0:46

V. Vor I Hore Arakeal (D-k): Hovhannes Yerznkatsi, 13th c.

13. As Decoded from Ancient Neumes 1:31
14. As Transcribed from Oral Tradition (Choir) 0:54
15. As Transcribed from Oral Tradition (Solo: Aren Avetian) 0:55

VI. Vor Ararichd Es Araratzots (D-k)

16. As Decoded from Ancient Neumes 1:36
17. As Transcribed from Oral Tradition (Choir) 1:15
18. As Transcribed from Oral Tradition (Solo: Arthur Markosian) 0:42

VII. Vor Tagavord Es Tagavorats (B-dz)

19. As Decoded from Ancient Neumes 3:04
20. As Transcribed from Oral Tradition (Choir) 1:24
21. As Transcribed from Oral Tradition (Solo: Vahe Begoyan) 1:21

VIII. Havurts Verchin Jamanaki (B-dz): Hovhannes Yerznkatsi Pluz, 13th c.

22. As Decoded from Ancient Neumes 1:59
23. As Transcribed from Oral Tradition (Choir) 0:53
24. As Transcribed from Oral Tradition (Solo: Aren Avetian) 0:53

IX. Yerjanik Ter Grigor (B-k): Movses Khorenatsi, 5th c.

25. As Decoded from Ancient Neumes 1:13
26. As Transcribed from Oral Tradition (Choir) 1:16
27. As Transcribed from Oral Tradition (Solo: Aren Avetian) 1:18

www.naregatsi.org

X. Vor Patviran Cheshmartutyan (B-k): Nerses Shnorhali, 12th c.
28. As Decoded from Ancient Neumes 1:45
29. As Transcribed from Oral Tradition (Choir) 0:54
30. As Transcribed from Oral Tradition (Solo: Hovsep Nshanian) 0:58

XI. Hayr Anskizbn (B-dz): Barsegh Jon, 7th c.
31. As Decoded from Ancient Neumes 1:57
32. As Transcribed from Oral Tradition (Choir) 1:05
33. As Transcribed from Oral Tradition (Solo: Hovsep Nshanian) 0:57

XII. Christos Astvats, Vor Aravel (D-k)
34. As Decoded from Ancient Neumes 5:22
35. As Transcribed from Oral Tradition (Choir) 1:01
36. As Transcribed from Oral Tradition (Solo: Vrezh Gharibian) 0:49

Examples from the oral tradition are drawn from transcriptions in Nikoghayos Tashjian's (1841-1885) hymnbook: Notated Sharaknots of Spiritual Songsof the Armenian Church, Vagharshapat, 1875.

www.naregatsi.org



Քո արածը մի սուրբ գործ է, սիրելի՛ Արթուր: Խոնարհում եմ աշխատանքիդ առաջ եւ շնորհաւորում եմ ամենայն անկեղծութեամբ Կոմիտասի հանդէպ ունեցած քո պաշտամունքի եւ հին խազերի վերծանութեան իր մեծ գործը անյայտութիւնից եւ մոռացումից փրկելու աննկուն կամքիդ համար:

Ինչ որ այստեղ տեսայ, շռնդալից խօսում է քո յայտնատեսական իմացութեան, տիրական գիտութեան, արտածական տրամաբանութեան եւ հզօր ներթափանցումների մասին, որով Կոմիտասի աշխատանքը փրկուած կարելի է համարել:

Վստահ եմ, որ քո շնորհիւ նոր էջ է բացուելու մեր խազագիտութեան ասպարէզում:

Դեռ շատ սերունդներ կը գնահատեն քո գործը եւ կը մեծարեն քեզ՝ երախտագէտ լինելով արածիդ նկատմամբ: Գիտցած ըլլաս, որ շռայլաբանութիւն չէ ասածս:

Պրոֆ. Վաչէ Պարսումեան

Դիրիժոր, երաժշտագէտ, Գլենդեյլի «Լարք» երաժշտական ընկերակցութեան ղեկավար, ԱՄՆ

The work you have carried out, dear Arthur, is sacred. I bow before it and congratulate you, with utmost sincerity, for uncovering the secrets of our ancient khazes as decrypted by Komitas. Through your indomitable resolve and intense devotion to Komitas, you have saved his great work from oblivion.

What you display in your extensive discourse speaks abundantly to your intuitive approach, extensive knowledge, deductive reasoning, and masterful inquiry into this enigmatic topic. Your efforts are the seeds from which we can safely deduce that Komitas' work on Khazes will be fully recovered.

I am convinced that your valiant effort in finding Komitas' key to reading our ancient Khazes, at least the simpler ones, will usher in a new chapter in the realm of neumology. Generations to come will benefit from your colossal achievement and will praise the foundations you have laid for them to build upon.

Prof. Vatsce Barsoumian

Conductor, musicologist, music director of Lark Musical Society of Glendale California, USA

www.naregatsi.org

«...Հին խազերը՝ որոնք, անշուշտ,
աւելի խօսուն են՝ մեռած լինելով,
քան մեր արդի մեռած ձայնանիշերը»:
Կոմիտաս

Այսօր եկեղեցին կարող է արարողակարգում պաշտօնապէս ընդունել վերծանուած շարականներ: 1909 թ. մարտի 19-ին Յ. Արշարունուն ուղղուած նամակում Կոմիտասը գրում է. «...16 տարուան աշխատանքս պտուղ տուաւ. գտայ մեր խազերի հիմնական բանալին եւ սկսայ կարդալ պարզ խազերով գրուածքներ: Արդ պիտի խնդրեմ, որ միառժամանակ, կրկին շարունակուի սովորական եղած երաժշտութիւնը, եւ երբ բոլորովին հրապարակ ելնէ մեր հանճարեղ նախնեաց հոգեբուխ երաժշտութիւնը, այն ժամանակ աւելի յարմար է ընդհանուր պատուիրագիր յղել հայ եկեղեցիներին. մեր անձնուրաց նախնեաց հզօր արիւնով՝ շաղախուած սուրբ տաճարների հաստահիմն կամարների տակ թող վերստին հնչեցնեն մեր պարզ ու վսեմ հոգեւոր ազգային եղանակները»:

Ներկայ ձայնասկաւառակում ներկայացուած են Կոմիտասի եւ Արթուր Շահնազարեանի խազաբանական ուսումնասիրութիւնների արդիւնքում կատարուած միջնադարեան շարականների վերծանութիւնները:
Տրուած է տասներկու շարականի վերծանութիւն: Համեմատութեան համար նախ հնչում է խազերից վերծանուած շարականը եւ ապա՝ բանաւոր պահպանուած նոյն շարականը (գրանցուած 19-րդ դարում):

Այդ շարականներն են.

1. Փարաւոն հանդերձ կառօքն (Բկ) – Ստեփանոս Սիւնեցի Ա. – V դ.
2. Հաստատեցաւ սիրտ իմ ի Տէր (Բձ) Ստեփանոս Սիւնեցի Ա. – V դ.
3. Պարծանք եկեղեցւոյ (Բձ) Մովսէս Խորենացի – V դ.
4. Անոխակալ եւ բարեգութ (Բձ) Պետրոս Գետադարձ – XI դ.
5. Որ ի հօրէ առաքեալ (Դկ) Յովհաննէս Երզնկացի – XIII դ.
6. Որ արարիչդ ես արարածոց (Դկ)
7. Որ թագաւորդ ես թագաւորաց (Բձ)
8. Յաւուրց վերջին ժամանակի (Բձ) Յովհաննէս Երզնկացի Պլուզ - XIII դ.
9. Ով երջանիկ տէր Գրիգոր (Բկ) Մովսէս Խորենացի – V դ.
10. Որ պատուիրան ճշմարտութեան (Բկ) Ներսէս Շնորհալի – XII դ.
11. Հայր անսկիզբն (Բձ) Բարսեղ Ճոն – VII դ.
12. Քրիստոս Աստուած, որ առաւել (Դկ)

www.naregatsi.org

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՕՏ ԱԿՆԱՐԿ

301 թուականին Հայաստանում քրիստոնէութիւնը հռչակւում է պետական կրօն:

Հայոց հեթանոսական արուեստն աստիճանաբար թափանցում է քրիստոնէութեան մէջ: Առաջին քրիստոնէական տաճարները կառուցւում են կործանուած հեթանոսական տաճարների հիմքերի վրայ: Քրմական դասի զգալի մասը քրիստոնէութիւն է ընդունում եւ շարունակում ծառայել իբրեւ եկեղեցու սպասաւոր:

Գրիգոր Լուսաւորիչը, որը կրթութիւն էր ստացել Յունաստանում, Կեսարիայից իր հետ բերեց օտարազգի հոգեւորականներ, որոնք դարձան հայ եկեղեցու պաշտօնեաներ: Նրանց պարտադրանքով դպրոցներում ուսուցումը, եկեղեցիներում ծէսերն ու արարողութիւնները կատարւում էին յունարէն եւ ասորերէն: Ժողովուրդը ոչինչ չէր հասկանում օտար լեզուով երգերից, ուստի անգիր էր անում հայերէն թարգմանուած աղօթքները եւ երգում մայրենի եղանակներով՝ հայոց հին եղանակներով: Մէկ դար հայ եկեղեցին հաղորդակցուեց յունականի ու ասորականի վրայ հիմնուած քրիտոնէական երգեցողութեանը:

5-րդ դարում Մեսրոպ Մաշտոցն ստեղծեց հայոց գրերը: Մաշտոցի եւ հայոց կաթողիկոս Սահակ Պարթեւի ջանքերով թարգմանւում է Սուրբ Գիրքը, եկեղեցական ծիսակարգը: Մաշտոցն ու Ս. Պարթեւը երգեցողութեան հիմքում դնում են հայոց հին, աւանդական եղանակները, կարգաւորում ձայնեղանակների համակարգը: Մաշտոցն անձամբ շրջում է Հայաստանի գաւառներում՝ ամենուրեք հիմնելով դպրոցներ եւ ուսուցանելով թէ՛ գրերը, թէ՛ երգերը: Եւ աստիճանաբար թարգմանւում ու ձեւաւորւում են Պատարագամատոյցը, Սաղմոսարանը, Ժամագիրքը եւ երգւում հայերէն:

Մաշտոցն իր աշակերտների մի մասին Յունաստան ուղարկեց սովորելու: Յունաստանից վերադառնալով՝ նրանք թարգմանեցին ամենաարժէքաւոր գրքերը, ինչպէս՝ քերականութիւն, փիլիսոփայութիւն: Նոյն դարում գրի առնուեց հայոց պատմութիւնը: Եկեղեցում աւետարանն ընթերցւում էր յատուկ արուեստով՝ ասերգի ձեւով, որ բխում էր գրաբարի շեշտադրութիւնից եւ հնչերանգից: Պատմիչների վկայութեամբ, թարգմանութիւնից յետոյ ամենուր ցնծութեամբ երգում էին սաղմոսներն ու ծննդեան երգերը: Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթեւը յօրինում էին ինքնուրոյն երգեր: Մաշտոցի անունով պահպանուել է 129, ՍահակՊարթեւի անունով՝ շուրջ 60 շարական՝ իրենց եղանակներով հանդերձ:

www.naregatsi.org

Կոմիտասը գրում է. «5-րդ դարում գրերի գիւտը, Ս. Գրքի թարգմանութիւնը հոգեւոր երգեր առաջ բերին: Հետզհետէ զարգացաւ եկեղեցական պաշտամունքն ու ժամերգութիւնը: Հանդէս եկան մի շարք երգիչներ, յօրինեցին շարականներ, ճառեր, ներբողներ՝ եկեղեցական, տէրունական եւ սրբոց տօների նշանակութիւնը ժողովրդին բացատրելու նպատակով:

... Սաղմոսերգութիւնը տեղի տուեց շարականի եղանակներին:

... Շարականի եղանակներից յետոյ կամաց-կամաց հանդէս եկան տաղերի, գանձերի, աւետիսների եւ այլ հոգեւոր երգերի տեսակներ՝ հանդիսաւոր ժամերգութեան պահանջից:

Սոքա եւս ներբողներ են, միայն ժողովուրդն էր երգում: Սոքա ժամանակի ընթացքում այնքան բազմացան եւ ճիւղաւորուեցին, որ իւրաքանչիւր եկեղեցական տօն յատուկ տաղն ունէր: Սոցանից առանձին-առանձին ժողովածու կազմուեցաւ՝ Տաղարան, Գանձարան, Երգարան անունով:

Սոցա սկզբնաւորութիւնը պէտք է որոնենք նոյնիսկ 5-րդ դարում, որովհետեւ աւանդութեամբ մեր ձեռքն են հասել տաղեր, մեղեդիներ, ծննդեան աւետիսներ Մ. Խորենացու անունով: Այս կարելի է երկու կերպ բացատրել: Նախ՝ եթէ նոքա նորանն եւս չլինէին, քանի որ լեզուի ոճն աղաւաղուած է դարերի ընթացքում, այնուամենայնիւ նորան ընծայելն իսկ ապացոյց է 5-րդ դարից սկիզբ առնելուն կամ թէ չէ, պէտք է ընդունենք, որ ամէն մի նոր բան, գրերի գիւտից եւ Ս. Գրքի թարգմանութիւնից յետոյ, ժողովուրդը վերագրում է 5-րդ դարու ս. հայրերին»:

5-րդ դարից մինչեւ 10- րդ դարը Հայաստանում հիմնւում են նշանաւոր դպրեվանքեր, որտեղ միւս գիտութիւնների հետ միասին ուսուցանւում է նաեւ երաժշտութիւն: Նշանաւոր երաժիշտ-փիլիսոփաների կողմից ստեղծւում են հարիւրաւոր երգեր, մշակւում է երաժշտութեան տեսութեան եւ գեղագիտութեան ամբողջական համակարգ: Ստեղծւում են երաժշտական զանազան ծիսամատեաններ: Երգերի եղանակների, երաժշտութեան գրանցման համար իբրեւ միջոց օգտագործւում է խազագրութիւնը: Խազերի կիրառման վկայութիւններ հանդիպում են 9-րդ դարից ի վեր, ինչը դեռեւս չի նշանակում, թէ 9-րդ դարից առաջ խազեր լինել չէին կարող:

Խազագրութիւնը հետզհետէ բարդացաւ եւ ճոխացաւ, աստիճանաբար խազաւորուեցին ծիսամատեանները: Խազաւորուեցին թէ՛ աւանդական երգերը, թէ՛ նոր ստեղծուածները: 12-րդ դարից սկսւում է խազագրութեան արուեստի նոր վերելքը, որն անկում է ապրում 15-րդ դարում: Անկման պատճառներն էին խազերի չափազանց բարդացումն ու հոծութիւնը,

www.naregatsi.org

գաղտնի գիտութիւն համարուելն ու քչերին մատչելի լինելը, նաեւ քաղաքական ծանր կացութիւնը. քոչուոր ցեղերի կործանարար ասպատակութիւններն աստիճանաբար քայքայեցին Հայաստանը՝ աննպաստ պայմաններ ստեղծելով ուսումնական ու ծիսական առօրեայի համար: Արդէն 17-18-րդ դարերում խազերը համարւում էին անընթեռնելի: Մշակութային աւանդական շատ կապեր վաղուց խզուել էին, եւ գրեթէ անհնար էր արդէն վերականգնել:

Եկեղեցական երգերը փոխանցւում էին բանաւոր: Այդ ամէնը, ինչպէս նաեւ որոշ հոգեւորականների կամայականութիւնները (երգեցողութեան առումով) պատճառ դարձան՝ հոգեւոր երգերի զգալի մասի աղաւաղման:

19-րդ դարում հայ եկեղեցական երգը ներկայացւում էր վեց տարբեր ոճերով՝ ա. Էջմիածնի, բ. Նոր Ջուղայի (հնդկահայոց), գ. Երուսաղէմի, դ. Կ. Պոլսի, ե. Վենետիկի, զ. Վիեննայի: Եղածը կորստից փրկելու նպատակով ստեղծուեց նոտագրութեան նոր համակարգ: Դրա միջոցով աւանդական հայ երաժշտութիւնը գրի առան եւ կորստից ու հետագայ աղաւաղումից փրկեցին *Շարակնոցը, Ժամագիրքը, Պատարագամատոյցը* եւ առանձին երգեր՝ *տաղեր, մեղեդիներ*:

19-րդ դարի վերջին մեր եկեցեղական երաժշտութեան մէջ խառնուել էին աւանդական ու խեղաթիւրուած երգերը. հին շրջանում՝ ասորականը, յունականը, բիւզանդականը, նոր շրջանում՝ պարսկականը, արաբականը, ընդհանուր տաճկականը ձուլուել էին հայկականին, եւ պէտք էր մի մարգարէ, որ դարերի աւերակներից վերակերտէր հայ երաժշտութիւնը: Այդ մարդը Կոմիտասն էր: Կոմիտասը գիւղերից ընտրութեամբ գրառեց մի քանի հազար երգ (նաեւ հոգեւոր երգեր): Նա հայ երաժշտութեան վրայից մաքրեց անցեալի ժանգն ու օտար ազդեցութիւնները՝ նախապէս սովորելով ու ճանաչելով օտարը: Լինելով արեւելցի երաժիշտ եւ քաջ գիտենալով արեւելեան երաժշտութիւնը՝ Կոմիտասը գերազանցապէս իւարացրեց նաեւ եւրոպական երաժշտութեան ձեռքբերումները: Հմտացաւ համաշխարհային խազաբանութեան մէջ, կատարեց խոշորագոյն գիտական հետազոտութիւններ: Խորութեամբ ուսումնասիրեց տարբեր ժողովուրդների երաժշտութիւնը, ինչպէս՝ *ասորական, բիւզանդական, յունական, հին հնդկական, հրէական, լատինական, պարսկական, արաբական, քրդական*: Իր համերգ-դասախօսութիւններով աշխարհին ծանօթացրեց հայ ժողովրդական եւ եկեղեցական երգ-երաժշտութեանը: Եղաւ նաեւ հայ ամենամեծ երգիչն ու կոմպոզիտորը, խմբավարն ու ուսուցիչը: Հայ ժողովուրդն իր մեծամեծներից միայն նրան դասեց Մաշտոցի կողքին:

www.naregatsi.org

Կոմիտասը քսան տարուց աւելի ճգնեց հարիւրաւոր ձեռագիր մատեանների վրայ, գտաւ հայոց հին խազերի բանալին եւ սկսեց կարդալ *պարզ* եղանակները: Կոմիտասը գրում էր, որ իր ուսումնասիրութիւնները նոր լոյս են սփռելու նաեւ ուրիշ ազգերի երաժշտութեան վրայ, ինչպէս նաեւ՝ յունական, որովհետեւ հայկական ձեռագրերը, աւանդապահ գտնուելով, պահպանել են կարեւորագոյն աղբիւրներ: Կոմիտասն օգտուել է նաեւ այնպիսի ձեռագրերից, որոնք այժմ կորած կամ ոչնչացած են: 1914 թուականին Կոմիտասը կրկին հրաւիրուեց Փարիզ՝ այս անգամ միջազգային յանձնաժողովի առջեւ աշխարհին ներկայացնելու *խազերի տեսութիւնը*:

Նոյն թուականին վերահաս հայկական ցեղասպանութիւնը ընդհատեց առաքելալի գործնական կեանքը. նա քսան անպտուղ տարիներ ապրեց Փարիզի հոգեբուժարանում:

Կոմիտասի ձեռագրերի մի մասը ոչնչացաւ, մի մասը սփռուեց աշխարհի տարբեր երկրներում: Հայկական վանքերի հետ միասին հրի ու սրի մատնուեցին հազարաւոր գրչագիր մատեաններ:

Այսօր Հայաստանի ձեռագրապահոցում՝ Մաշտոցի անուան Մատենադարանում, պահւում են մօտ 15 հազար գրչագիր մատեաններ եւ պատառիկներ, որոնք հարուստ նիւթ են պարունակում: Երաժշտական-ծիսական հարիւրաւոր մատեաններ խազաւորուած են: 290-ից աւելի պատարագամատոյցները, մօտ 300 ժամագրքերը, 350 շարակնոցները, տասնեակ տաղարաններն ու գանձարանները, մանրուսման գրքերն ու այլ ծիսական մատեաններ պահպանում են հայոց եկեղեցական դարաւոր երաժշտութիւնը: Նոյնպիսի ձեռագրեր պահւում են նաեւ Երուսաղէմում, Վենետիկում, Վիեննայում, այլ ձեռագրապահոցներում ու տարբեր մարդկանց մօտ:

www.naregatsi.org

ԽԱԶԱՒՈՐ ԳԼԽԱՒՈՐ ՃԻՍԱՄԱՏԵԱՆՆԵՐԸ

Կոմիտասը գրում է. «Հայ եկեղեցւոյ խազերը կրնան բաժանուիլ երեք դասի. առոգանութեան նշաններ, կետադրութեան նշաններ եւ երգեցողութեան խազեր»:

Սուրբ Գիրքը, Սաղմոսարանը, Նարեկը («Մատեան ողբերգութեան») գրուած են առոգանութեան եւ տրոհութեան (կէտադրութեան) նշաններով: Այդ նշանների օգնութեամբ գրառուել է ասերգը կամ ասերգուել են ընթերցուածները: Այդ գրքերում երբեմն հանդիպում են նաեւ երգեցողութեան խազեր: Ասերգում են նաեւ քարոզներ, ճառեր եւ այլեւայլ արձակ գրուածքներ: Առոգանութեան եւ տրոհութեան նշաններով ու որոշ բնորոշ խազերով է գրուած *Գանձարանը*:

Շարակնոցը գրուած է երգեցողութեան խազերով եւ իր մէջ ներառում է նաեւ առոգանութեան ու տրոհութեան նշանները:

Ժամագիրքը, *Պատարագամատոյցը*, *Մաշտոցը* (ծէսերի եւ արարողութիւնների՝ թաղման, կնունքի, պսակադրութեան եւ այլնի հետ կապուած երգերը) պարունակում են թէ՛ երգեր՝ գրուած շարականի խազերով, թէ՛ երգեր՝ ճոխ, բարդ ու հոծ զարդախազերով:

Ճոխ խազաւոր են նաեւ *Տաղարանը*, *Մանրուսման գրքերն* ու *Խազգրքերը*:

Նախնական ընդհանուր պատկերացում տալու համար բերենք երեք օրինակ՝ ա. առոգանութեան եւ տրոհութեան նշաններով, բ. պարզ խազերով, գ. բարդ եւ ճոխ զարդախազերով:

Իսկ ա՛րդ՝ ո՞՛ի ձեռջ առ հոգա՛լ իւրում, յաւելո՛ւլ կարիչէ՛՝ի հասա՛կ իւր կանգո՛ւն մի՛.

Եւ վասն հանդերձի զի՞ հոգայք.՝Հայեցարո՛ւք՛՝ի շուշա՛ն վայրենի՝ ո՞րպէս աճէ՝ ո՛չ ջանա՛յ եւ ո՛չ նիւթէ.՝Ասեմ ձե՛զ զի եւ ո՛չ Սողոմո՛ն

www.naregatsi.org


յամենայն ՚ի փառս իւրում զգեցա՛ ՚իբրեւ ըզմի՛ ՚ի նոցանէ. Իսկ եթէ զխտոն ի վայրի որ այսաւր է եւ վաղիւ ՚ի հնոց արկանի՝ ած այնպէս զգեցուցանէ՛ որչափ եւ առաւել զձեզ քերահաւատք. մի՛ այսուհետեւ հոգայէք եւ ասիցէք զինչ կերիցուք՝ կամ զինչ արբցուք կամ զինչ զգեցցուք[1]։

Քս. ի մէջ մեր յայտնեցա՛ որ էր՝ ած աստ բազմեցա՛։
Խաղաղութե՛ ձայն հընչեցա՛ սուրբ ողջունիս հրամանն տուա՛։
Եկեղեցիս մի անձն եղա՛ համբոյրըս յաւդ լըրման տուա՛։
Թոչնամութիըն հեռացա՛. սէրն ընդհանուրըս փըռեցա՛։
Արդ պաշտաւնեայք բարձեալ ըզձայն տուք աւրհնութի ի մի բերան.
միասնական ածութեն որում սրտէք են սրբաբան
Ահիւ կացցուք երկիւղիւ կացցուք. բարիոք կացցուք...
Առ քեզ աստըւած։ ... Ջողորմութի՝ եւ խաղաղութի եւ պատարագ
աւրհնութե՛
Եւ հոգւոյդ քում։ ...Ունիմք առ քեզ տր ամենակալ։ Եւ գոհացարուք
զտէ՛ բոլորով սրտիւ։ Արժան՝ եւ իրաւ։[2]

Աւրհնեցէք՝ զտր յերկնից աւրհնեցէք՝ զնա ի բարձանց[3]

1. Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռագիր 6767, էջ 45ա։
2. Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռագիր 3046, էջ 21բ-22ա։
3. Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռագիր 3522, էջ 2ա։


www.naregatsi.org



Լըսյաք ի բա բուքեց. քոյ տր. ճաշակելով ըզմարմին քո եւ
զարի: ,մմ: ,իւր ւն Փա մ ը ◎◎: —մ,սմ.ոք
ի բարձո ◎ ւնս կերակրողիդ, ը ամ մ զ ը մեզ:
Որ հանապազ կերակրես ըզմեզ առաքեա ի մեզ ըզ հոգեւոր քո
զաւրհնութիդ: Փառք ի բարձունըս կերակրողիդ ը ս մ զը մեզ[1]
հայր երկնաւոր ոչ զորդիդ քո եառուր: ի մահ
վա սըն մեր պա ատապա ն պարտեա ց մերոյ.
հե ղմամբ արեան նորա. աղաչե մք ըզ քեզ
ո ղորըմեա պ ար քո շ. բանաւոր հաւտիս Որդի
ա ստուծոյ. որ պատարագեալ: հաւր ի հաշ տուբի
հա ց կենաց բաշխիս ի մեզ հեղ մամբ արեան քո
սուրբ: աղաչե մք ըզ քեզ: ողորըմեա պ ար ց.
արեամբ քո փրկեալ հաւտիս:[2]

1 Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռագիր 3046, էջ 42ա:
2. Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռագիր 3046, էջ 24-26ա:

www.naregatsi.org



Գանձարան, Սիս, 1394 թ., ձեռ. № 3503

www.naregatsi.org

Հայ գիտական հասարակութեանը յայտնի է, որ Կոմիտասն իր ստեղծագործական-գիտական գործունէութեան վերջին շրջանում գտաւ հայ միջնադարեան նոտագրութեան՝ խազերի բանալին, սկսեց կարդալ պարզ շարականները, սակայն Մեծ եղեռնի տարիներին Կոմիտասի այլեւայլ ձեռագրերի հետ կորան նաեւ խազաբանական ուսումնասիրութիւնները՝ խազերի վերծանութիւնները. կորաւ խազերի բանալին:

Երաժշտագիտական գրքերում եւ յօդուածներում երբեք պատշաճ կերպով չեն նկարագրուել Ե. Չարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանում՝ Կոմիտասի դիւանում, պահպանուող խազաբանական ձեռագրերը[1]: Վիճակը նոյնն էր առոգանութեան նշանների (խազերի) վերաբերեալ, երբ առաջին անգամ հրատարակեցի առոգանութեան վերաբերեալ Կոմիտասի անտիպ նիւթերը[2]:

Սակայն որքան մեծ էր զարանքս, երբ 1984 թուականին ուսումնասիրելով Կոմիտասի դիւանը՝ այնտեղ գտայ ոչ միայն խազերի «բուն բանալին» (Կոմիտասի խօսքերով), այլեւ՝ խազերի վերծանութիւններ եւ նոյնիսկ խազաւոր շարականների վերծանութիւններ: Այդ մասին երկու անգամ ելոյթ ունեցայ հեռուստատեսութեամբ, երգեցի վերծանուած շարականը, 1990 թուականին դասախօսութիւն կարդացի Փարիզում՝ հայ երաժշտութեանը նուիրուած գիտաժողովում: 1990թ. հոկտեմբերի 1-ին «Գեղարուեստ» թերթում տպագրուեց «Գտնուած է խազերի բանալին» յօդուածը եւ այլն, սակայն այդպէս էլ հնարաւոր չեղաւ հրատարակել այդ նիւթերի նոյնիսկ մի փոքրիկ մասը:

Ի հարկէ, տարօրինակ է այն փաստը, որ այդ ձեռագրերը, դեգերելով ու յանգրուանելով Կոմիտասի դիւանում, փաստօրէն 85 տարի սպասում էին լոյս աշխարհ գալուն: Պակաս տարօրինակ չէ տարածուած այն մտայնութիւնը, թէ Կոմիտասը գտաւ խազերի բանալին, սակայն այն կրկին կորաւ:

Խազերի կիրառման վկայութիւններ հանդիպում են 9-րդ դարից ի վեր: 12-րդ դարից սկսւում է խազագրութեան արուեստի նոր վերելքը, որն

1. Կոմիտասի ժառանգութեան հրատարակութիւնն իրականացնող երջանկայիշատակ Ռոբերտ Աթայեանը, բացի դրան նուիրուած մի երկու հատուած մէջբերելուց, այդպէս էլ չանդրադարձաւ Կոմիտասի խազաբանական ձեռագրերին եւ, ընդհանրապէս, անտիպ երաժշտատեսական ժառանգութեանը, որովհետեւ աւարտին չէր հասցրել Կոմիտասի ստեղծագործական եւ ազգագրական ամբողջական ժառանգութեան հրատարակումը: Ողջ գիտական կեանքը հայ միջնադարեան երաժշտութեանը նուիրած Ն. Թահմիզեանը իր բազմաթիւ գրքերում եւ յօդուածներում այդպէս էլ չանդրադարձաւ Կոմիտասի՝ պահպանուած խազաբանական կարեւորագոյն ձեռագրերին:

2. Շահնազարեան Ա. Մ., Միջնադարեան խազարուեստը հայ երաժշտական մշակոյթի համակարգում, հտ. 1 (Առոգանութիւն) Երեւան, 1990, 820 էջ:

www.naregatsi.org

անկում է ապրում 15-րդ դարից, եւ արդէն 17-18-րդ դարերում խազերը համարւում են անընթեռնելի: Եւ ահա 20-րդ դարի սկզբին Կոմիտասը յայտնում է, որ գտել է խազերի բանալին: Մի ցաւալի հարց է առաջանում. ինչո՞ւ Կոմիտասն այդ բանալին աւելի որոշակի չներկայացրեց 1914 թ. փարիզեան դասախօսութիւններում, որոնց շնորհիւ պահպանուած կը լինէր, ինչո՞ւ չբացատրեց աշակերտներին, որոնց շնորհիւ կը պահպանուէր: Մի՞թէ խազերի բանալու վերաբերեալ 20 տարուայ տքնաջան աշխատանքի արդիւնքների մի կարեւորագոյն մասը չպահպանուեց որեւէ առանձին թերթիկի վրայ: Եւ ահա պարզւում է, որ պահպանուել է. Կոմիտասի դիւանում հանդիպում ենք «կորած» բանալուն:

1984 թուականից շարունակելով, առաջ տանելով Կոմիտասի գործը՝ սկսեցի շարադրել խազերի վերաբերեալ հինգ հատորանոց աշխատութիւն՝ հետեւեալ կարգով. հատոր Ա - Առոգանութիւն, Բ - Չափաբանութիւն (տաղաչափութիւն), Գ - Ձայնեղանակներ, Դ - Խազերը եւ նրանց նշանակութիւնը, Ե - Վերծանութիւն:

1990 թ. լոյս տեսաւ առաջին հատորը (Ա. Մ. Շահնազարեան, Միջնադարեան խազարուեստը հայ մշակոյթի համակարգում, հատոր1, «Հայաստան» հրատ., Երեւան 1990, 820 էջ):

Պատկերացնելու համար տալիս ենք առաջին հատորի բովանդակութեան ցանկը, որ վերաբերում է առոգանութեանը եւ պարզագոյն խազերին եւ հիմնուած է միջնադարեան ձեռագրերի, քերականների եւ այլ աղբիւրների վկայութիւնների վրայ: Գրքում ամփոփուած է խնդրին առնչուող ողջ նիւթը, եւ տրուած են ասերգի վերծանութեան օրինակներ:

Աղբիւրների ցանկ.....8
Մուտք.....20
ՄԱՍՆ Ա.....38
ԱՌՈԳԱՆՈՒԹԻՒՆ.....38
Ընդհանուր նախաբան.....40
Խօսաձայնի գրառումը.....43
Նախնական գիտելիք.....48
ա) Հասարակ խօսք.....50
բ) Տրամաբանական շեշտի ազդեցութիւնը սովորական խօսքի վրայ.....68
գ) Յուզական խօսք.....79
դ) Ասմունք.....91
ե) Անցում ասմունքից ասերգ.....116

www.naregatsi.org

Ա. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՍԵՐԳ....131
1. Նախաբան....132
2. Քառալարի համակարգը....133
3. Ամանակ....135
4. Եղանակաւորման տեսակները....137
5. Շեշտադրութիւն....140
ա) Շեշտադրութիւն (ընդհանուր)....141
բ) Սկսող ձայն....148
գ) Երկար....150
դ) Հարցական շեշտ....153
ե) Պարոյկ....160
6. Տրոհութիւն կամ կէտադրութիւն....173
ա) Տրոհութեան օրէնքները....174
բ) Վերլուծութիւնները եւ ձեւերը ասերգում....185
գ) Կէտադրութեան եղանակաւորումները եւ յանգաձեւերը....195
7. Բացականչութիւնները ասերգում....204
8. Ընդհատում....206
9. Ընդհանրացում....212
10. Մտքի եւ զգացմունքի տեսակներն ու ձեւերը....220
11. Վերլուծութեան օրինակ....225
12. Ասերգի օրինակներ....239

Բ. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՍԵՐԳ....274
1. Նախաբան....275
2. Կարդալու արուեստը («վերծանութիւն»)....277
3. Առոգանութիւն....279
4. Առոգանութիւն....283

Ա. Ոլորակ, Բ. Ամանակ, Գ. Հագագ, Դ. Կիրք
Ա. Ոլորակ....284
ա) Ոլորակ....285
բ) Շեշտ (զօրութիւնը եւ սկզբունքը)....289
գ) Բութ (զօրութիւնը եւ սկզբունքը)....303
դ) Պարոյկ (զօրութիւնը եւ սկզբունքը)....312
ե) Ընդհանուր փոխյարաբերութիւններ....331

www.naregatsi.org

Բ.Ամանակ....334
ա) Ամանակ....335
բ) Երկար (զօրութիւնը)....335
Սուղ (զօրութիւնը)....335
գ) Երկար (սկզբունքը)....336
Սուղ (սկզբունքը)....338
դ) «Հասարակ վանգ»....338
Գ. Հագագ....340
ա) Հագագ....341
բ) Նախնական գիտելիք....344
գ) 1. Թաւ (զօրութիւնը)....346
2. Սոսկ (զօրութիւնը)....346
3. Միջակ (կամ՝ հաւասար)....348
1. Թաւ (սկզբունքը)....348
2. Սոսկ (սկզբունքը)....354
դ) Թաւ եւ սոսկ (ձայնաւորների վերաբերմամբ, ձայնաստիճանի նշանակութեամբ)....358
ե) Թաւ եւ սոսկ (բաղաձայների վերաբերմամբ, ձայնաստիճանի նշանակութեամբ)....363
Դ. Կիրք....372
ա) Կիրք....373
բ) Ապաթարց (զօրութիւնը)....374
Ապաթարց (սկզբունքը)....376
գ) Ենթամնայ (զօրութիւնն ու սկզբունքը)....382
դ) Ստորատ (զօրութիւնն ու նշանակութիւնը)....388
ե) Եղեգնաձեւ....390
5. «Ենթադատութիւն» 392
ա) Ենթադատութիւն (արտասանութեան եղանակը)....393
բ) Ենթադատութիւն (սկզբունքը եւ տեսակները)....395
6. Տրոհութիւն (կամ կէտադրութիւն)....405
ա) Տրոհութիւն....406
բ) Կէտադրութեան եւ շեշտադրութեան յարաբերութիւնը ....(412)
գ) Ստորակէտ (զօրութիւնը, սկզբունքը)....414
դ) Միջակէտ (զօրութիւնը, սկզբունքը)....416
ե) Վերջակէտ (զօրութիւնը, սկզբունքը)....420
զ) Բութ....425

www.naregatsi.org

7. Ճարտասանութիւն.....430
8. Համամարդկային օրինաչափութիւններ.....437
9. Հատուածներ նշաններ պարունակող ձեռագրերից.....444
ա) Շեշտադրութիւն.....445
բ) Հարցական շեշտ եւ պարոյկ.....480
գ) Տրոհութիւն կամ կէտադրութիւն.....490
դ) Բութ.....507
ե) Սուղ.....510
10. Նշանների նշանակման սկզբունքը եւ նշանների ձեւերը.....513
11. Առոգանութեան եւ տրոհութեան նշանների տեւողութիւնները.....539
12. Հայկական եւ յունական ասերգի ընդհանրութիւններն ու տարբերութիւնները.....546
13. Առոգանութեան համեմատութիւնը երկրաչափութեան հետ.....566
14. Վերծանութիւն Տրոհութեան եւ առոգանութեան տարրերի եւ նրանց հիմնական զուգորդումների ձայնանիշային օրինակները.....568
15. Չափ-արագութիւնը ասերգում.....608
16. Թուերգի ձայնամիջոցը.....608
17. Ձայնեղանակների առնչութիւնը ասերգին.....610
18. Ասերգի հնագոյն համակարգը.....611
19. Սաղմոսասացութիւն եւ սաղմոսերգութիւն.....622
20. Թուաստութիւնը՝ ըստ Կոմիտասի.....655
21. Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» աղօթագրքի արտասանութեան եւ ասերգութեան ձեւերը.....666
22. Օրինակներ թէ՛ ներկայումս կիրառուող, թէ՛ անցեալ դարում կիրառուած ասերգերից.....731
23. «Տէրունի» կոչուող նշանները.....813

Առոգանութեան հատորում մենք հրատարակեցինք նաեւ Կոմիտասի մի ձեռագիր, որը հերքում է տարածուած այն թիւր կարծիքը, թէ Կոմիտասի ուշ շրջանին վերաբերող խազաբանական ձեռագրերը չեն պահպանուել: Այդ ձեռագրում նշուած է 1914 թուականը (խազերի բանալին Կոմիտասը գտել էր 1909 թ.): Ահա այդ նիւթը:

1914 թ. Փարիզում կարդացած դասախօսութեան մէջ Կոմիտասը գրում է. «Ժ.գ. դարից մինչեւ Ժե դար առոգանութեան նշանների վրայ աւելանում են նաեւ «Տէրունի» կոչուածները. «այսինքն այն նշանները, որ սահմանուած են Տիրոջ խօսքերը արտայայտելու»:

www.naregatsi.org

Խօսքը վերաբերում է Արիստակէս գրչի հաղորդած տեղեկութեանը.

«...է իսկ անգաւոր զքերթողական գծիցդ կարգուած եւ զբազմայոյլ խըմբիցըդ շարժուածք յոլովիւք բանիւք եւ բազմամասնեայ բայիւք նոցին վերտառութեամբ արտակերտել շաղկապելով զմի առ միոյ, զի որ ոք ոչ դանդաղեսցի տքնել յիմաստս յայս վարժաւոր առ ի մակացութիւն գրոց աստուածայնոյ, կարասցէ անսայթաք սոքաւք տրոհել ըստ որոշման զճահողակին, եւ զյանկաւոր, եւ զյոքնամասնեայ զյեռահիւսիցն իսկ զյանգուածսն, առ ի միմիանց սուրբ եւ յստակ բացատրել: Սոքաւք թէ ոք տքնէ, ստուգիւ իսկ ճանաչէ որիշ որիշ եւ զտեղեաւն պիտանին եւ զիւրական գերալրութեամբն գերունակ զգիրս գլխագիր, զանշեշտն եւ զշեշտաւորն իսկ եւ Տէրունի զշեշտաւորն, զհենգն եւ զհարցուկ, զքաշս եւ զոյժ: զզարկ, եւ զդիր, զստոր, եւ զկիսաստոր, որ է ներքնաբութըդ., զբացատս, զմիաստիք, զերկուստիք, որ ասի տուն, զպարոյկ զենթամնայ եւ զգրադարձըն բովանդակ լրիւն զսկսման տողիցդ եւ զկատարածըն, հանդերձ սեպհական եւ հմտական եթ-կապովքն, եւ ոչ այլ ընդ այլոց եթերով խամրացուցեալ զգիրսն»:

www.naregatsi.org

Կոմիտասը եզրակացնում է.

«Այդ 13 նշաններու մեծ մասը առոգանութեան տասը նշաններուն հետ կը նոյնանան, նոյնիսկ տարբեր անուններով, իսկ միւսները նոր նշաններ են: Անունով եւ ձեւով կը նոյնանան պարոյկը եւ ենթամնան: Անունով տարբեր, իսկ ձեւով նոյնն են՝ բութը եւ դիրը, երկարը եւ քաշը, ստորը եւ իր ենթանշանները:

Շեշտը եւ զարկը թէ՛ ձեւով եւ թէ՛ անունով կը տարբերին: Սուղը, թաւը, սոսկը եւ ապաթարցը գոյութիւն չունին եւ վերջակէտն ու միջակէտը կէտադրութեան համար միայն կը գործածուին»[3]:

1	2	3	4	5	6	7	8
շեշտ,	բութ,	պարոյկ,	երկար,	սուղ,	թաւ,	սոսկ,	ապաթարց
զարկ,	դիր,	պարոյկ,	զքաշս,	\	\	\	\

9	10
ենթամնայ,	ստորատ,
ենթամնայ,	ստոր,

«Հենգն» խազին Կոմիտասն անուանում է նաեւ «հեգնական»:

Արիստակէսը «կիսաստորը» նոյնացնում է «ներքնաբութի» հետ. «զկիսաստոր, որ է ներքնաբութդ»:

Իսկ գրելով «զբացատս»՝ նկատի ունի տրոհութիւնը: «Քաշ»ը ներկայացնում է յոգնակի ձեւով. «զքաշս», քանզի նրա զանազան տեսակներ կան /թէ՛ գծագրաձեւի, թէ՛ զօրութեան/:

Պարզութեան համար «Տէրունի» նշանները ներկայացնում ենք այսպէս.

1) Հենգն
2) Հարցուկ
3) Քաշ («զքաշս»)
4) Ոյժ
5) Զարկ
6) Դիր
7) Ստոր

3. Կոմիտասի դիւանում հայերէն թարգմանութիւնն է ֆրանսերէնից, ուր թարգմանիչը «դիր»ը չի թարգմանել եւ թողել է état, թարգմանել է՝ ծանր, փոխանակ՝ քաշի:

www.naregatsi.org

8) Կիսաստոր («որ է ներքնաբութ» ՝) ›(՝)
զբացատս (տրոհութիւն)
9) Միաստիք (միջակէտն է) •
10) Երկուստիք (վերջակէտն է) :
11) Պարոյկ ◠
12) Ենթամնայ ◡
13) Գրադարձ ⌣

Կոմիտասի ձեռագրերում մեզ հանդիպեց խնդրին առնչուող մի շատ հետաքրքիր նիւթ: Մէկ էջի վրայ Կոմիտասը ներկայացրել է թէ՛ առոգանութեան դասական նշաններ, թէ՛ «Տէրունի» նշաններ, թէ՛ կէտադրական նշաններ եւ թէ՛ երգողական այնպիսի խազեր, որոնք հանդիպում են թուերգի վերջաւորութիւններում: Այս ցուցակը իր տեսքով, իր մէջ պարունակում է նաեւ որոշ բացատրութիւններ՝ վերաբերող կէտադրութեան նշանների դիրքին, առոգանութեան նշաններից՝ շեշտի, հաւասար բութի, ցած կամ ծանր բութի եւ պարոյկի ձայնաստիճանային փոխյարաբերութեանը, բուն երգի ձայնածաւալին, «ենթաբութ»-ին:


Յատկապէս արժէքաւոր է ձեռագիրը, քանզի այն գրուած է 1914 թուին, այսինքն՝ Վարդապետի ստեղծագործական, աշխատանքային կեանքի վերջին մասում:

Ձեռագրի ներքեւի մասում գրել է. 1914
1894
20

որ նշանակում է, թէ գործն սկսել է 1894 թուականին եւ աշխատել մինչեւ 1914 թուականը, որ անում է 20 տարի: - Կոմիտաս. «Քսան տարիէ ի վեր կ'ուսումնասիրեմ հայ եկեղեցւոյ խազերու համակարգը»:
Այս խօսքերն արտասանել է Կոմիտասը 1914 թուին Փարիզի համաժողովում առոգանութեան նշանների վերաբերալ դասախօսութիւնը կարդալիս:


Կոմիտասի ձեռագրի դիւրընթեռնելիութեան նպատակով մենք ներկայացնում ենք այդ ձեռագրի նմանահանութիւնը եւ ապա նոյնի մեր վերծանութիւնը:

www.naregatsi.org



Կդ. 662

www.naregatsi.org



Ձայնաստիճանները գրել է եւրոպական (ընդունուած պայմանական տառերով)

ժ = րէ, c = դօ, h = սի, a = լյա, g = սոլ, f = ֆա:

www.naregatsi.org

Հետագայում՝ 2001 թուականին, Կոմիտասի խազաբանական նիութերը հրատարակեցի առանձին հատորով՝ իմ աշխատասիրութեամբ, մեկնութիւններով, վերլուծութիւններով, իմ կատարած ուսումնասիրութիւնների ու վերծանութիւնների օրինակներով հանդերձ (Ա. Մ. Շահնազարեան, Խազերի կոմիտասեան վերծանութեան յայտնութիւնը, «Հայաստան» հրատ., Երեւան, 2001): Իմ հրատարակած այս նիութերի մեծ մասը այլոք վերահրատարակեցին վեց տարի յետոյ՝ նշումներով, թէ իբր հրատարակւում են առաջին անգամ՝ թիւրիմացութեան մէջ գցելով հովանաւորին՝ Գալուստ Գիւլբենկեան հաստատութեանը եւ անտեղեակ հասարակութեանը (տե՛ս Կոմիտաս Վարդապետ, Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ, գիրք Բ, Սարգիս Խաչենց - Փրինթինֆո, Երեւան, 2007):

Կոմիտասը 1909 թ. յայտնում է Արշակ Չօպանեանին, որ գտել է խազերի բանալին եւ սկսել է կարդալ պարզ եղանակները, իսկ 1910 թ. «Ազատամարտին» ուղարկած գրութիւնում ասում է. «եւ նոյնիսկ կարդում եմ պարզ դարձուածքները», եւ ապա՝ «Յոյս ունիմ, թէ մօտիկ ապագայում առանձին հատորներով, հասարակութեան սեփականութիւնը պէտք է դառնա»: Ես իմ գրքում ցոյց եմ տուել, որ Կոմիտասը ոչ միայն հատորներ չի շարադրել խազերի վերաբերեալ, այլ նոյնիսկ ամփոփ չի շարադրել ամենանախնական նիութը՝ առոգանութիւնը, եւ Կոմիտասի խազաբանական ձեռագրերի մասին ժամանակակիցների տեղեկութիւններն ու վկայութիւնները համապատասխանում են պահպանուած ձեռագրերին: Կոմիտասն ասում է միայն, որ կարդում է խազերի պարզ դարձուածքները, եւ սա լիովին համապատասխանում է իր իսկ ձեռքով վերծանած օրինակներին: Այս բոլոր փաստերից յետոյ խազաբանութիւնից գաղափար չունեցող որոշ «երաժշտագէտներ» յայտարարում են, թէ Կոմիտասի խազաբանական ձեռագրերը չեն պահպանուել: Այն, որ Կոմիտասի վերծանութիւնը պահպանուած է, փաստ է, եւ երաժշտագէտները կարող են միայն համաձայնել Կոմիտասի՛ հետ կամ չհամաձայնել Կոմիտասի՛ հետ:

www.naregatsi.org

ԽԱԶԵՐԻ ԲԱՆԱԼԻՆ

Կոմիտաս. «Իսկական փորձերն սկսայ Բձ-ով, զի հիմնաձայներն այստեղ անաղարտ էին մնացել հին եւ նոր ոճերի մէջ:

1. Նկատեցի, որ բուն բանալին է դիմող ձայնը, եւ բոլոր խազերն իրենց սկզբունքը առնում են իւրաքանչիւր ձայնի համապատասխան դիմող ձայնին:

2. Իւրաքանչիւր ձայն իր ձայնաստիճանի բարձրութիւնը պահում է անփոփոխ՝ առնելով հաշուելով՝ միշտ դիմող ձայնէն եւ ապա իրեն յատուկ շարժումն է կատարում. եթէ ելնող է՝ ելնում է, իջնող է՝ իջնում:

3. Բութը (`) հանգչող ձայնն է (Բձ-ի մէջ երբեմն c եւ երբեմն a հաշուելով դիմողը՝ e):

Օրինակ՝ ԲՁ-ի

Դիմողն է՝ e
Հանգչողն է՝ c կամ a
Վերջաւորողն է՝ a
Շեշտն է՝ g
Բենկորձն է՝ fis-g
Պարոյկն է՝ d – c
Ոլորակն է՝ d - e
Փուշն է՝ e - d
Խունձն է՝ c – h կամ g-fis
Վերնախաղն է՝ a – c – h – c
Բութն է՝ c, a, կամ d (fis), d - եթէ քառունակն է՝ d – e – fis – g
Թուրն է՝ a – d կամ e – a
եւ այլն»:

Յիշեալ խազերի ձեւերն են.

Շեշտ 
Բենկորձ 
Պարոյկ 
Ոլորակ 
Փուշ 
Խունձ 
Վերնախաղ 
Բութ 
Թուր

www.naregatsi.org

Խազաւոր երգ վերծանելու համար նախեւառաջ պէտք է իմանալ երեք հիմնական հանգամանք.

ա. երգի ձայնեղանակի ձայնելեւէջային համակարգը (ընդհանրապէս ձայնեղանակների համակարգը),

բ. գործածուած խազերից իւրաքանչիւրի նշանակութիւնը, ելեւէջը կամ ձայնը եւ այլն,

գ. այն բանալին, որի շնորհիւ խազերը գտնւում են համապատասխան փոխյարաբերութեան մէջ, ընթերցւում-երգւում են որոշակի սկզբունքով: Խազերը, ինչպէս եւ խազաւոր երգերը, լինում են պարզ, միջին բարդութեան եւ բարդ: Այնպէս որ, խազերի բանալին ունենալը (տարածուած արտայայտութիւն է) դեռեւս չի նշանակում վերցնել ու երգել ցանկացած շարական. հարկաւոր է իմանալ իւրաքանչիւր խազի նշանակութիւնը եւ այլ շատ բաներ:

Կոմիտասի գրութիւնից երեւում է, որ նախ նա պարզել է պարզ խազերից իւրաքանչիւրի նշանակութիւնը, ապա գտել է դրանց փոխկապակցուածութեան բանալին եւ սկսել է պարզ շարականների վերծանութեան փորձերը:

Կոմիտասի դիւանում թիւ 631ա ձեռագրերի մէջ հանդիպում ենք խազաւոր շարականի վերծանութեան:

Դա «Փարաւոն հանդերձ կառօքն» շարականն է Աւագ օրհնութիւնների շարքից եւ այլ շատ բաներ, որի հեղինակն է Ստեփանոս Սիւնեցի Ա-ն (5-րդ դար):



www.naregatsi.org

Կոմիտասի այս վերծանութիւնը, 19-րդ դարից բանաւոր աւանդուած տարբերակների հետ համեմատած, աւելի հին է ոճով, աւելի խորհրդաւոր է, վեհափառ եւ զուսպ:

Կոմիտասի վերծանութեան որոշ հատուածներ ունեն «տարբերակներ», սակայն դրանք արդիւնք են խազերի բանալու մէկ այլ անհրաժեշտ պայմանի: Կոմիտասը մէկ այլ տեղ նշում է, որ խազերի նշանակութիւնը չափւում է քառունակներով:

Սա մի պարզ բան է, որը երեւում է վերծանութիւնում: Բանն այն է, որ տուեալ խազի ելեւէջը կամ ձայնը կարող է գտնուել կամ վերին, կամ ներքին քառունակի համապատասխան ձայնաստիճանում, եւ այդ յուշում է մեղեդու ընթացքը:

Այսպէս.




Այստեղ նախընտրելի է վերին քառեակի տարբերակը: Կոմիտասը նախքան երգի վերծանութիւնը շարադրել է երգում գործածուած խազերից իւրաքանչիւրի ձայնը, ձայնելեւէջը.



www.naregatsi.org

Բացի քառունակի հանգամանքից պէտք է նկատի ունենալ եւս մէկ օրինաչափութիւն: Ինչպէս մարդը, այնպէս էլ մեղեդին ունի իր կմախքը, «միս ու արիւնը», «նեարդային համակարգը» եւ այլն: Եւ որքան «մարմնի» մասը նուրբ է, այնքան եղանակի գրանցումը պէտք է աւելի մանրամասն լինի՝ ցոյց տալու համար նրբութիւնները: Նոյնիսկ եւրոպական ամենամանրամասն եւ ճշգրիտ գրանցումը, նոյնիսկ գրանցման այն յաւելեալ միջոցները, որոնք գործածւում են ժողովրդական երգերի յատուկ նոտագրութեան համար, դեռեւս բաւական չեն՝ արտայայտելու կենդանի երգի ողջ հարստութիւնը, նրբութիւնները, եւ Կոմիտասի երգերն էլ հնարաւոր չէ կատարել հարազատ ոճով միայն նոտաների օգնութեամբ: Այդ պատճառով, երբ լսում ենք, օրինակ, «Յով արէք»-ը Կոմիտասի եւ ուրիշ երգիչների կատարմամբ, թւում է՝ նոյնիսկ տարբեր երգեր են երգում, այն դէպքում, երբ առկայ է նոյն նոտագրութիւնը:

Այսպիսով, խազաւոր երգերում դրութիւնը սկզբունքօրէն նոյնն է: Որքան աւելի քիչ մանրամասնութեամբ է խազաւորուած երգը, այնքան աւելի շատ հնարաւորութիւն է ընձեռուած ելեւէջների տարբերակմանը (իմպրովիզացիային): Տուեալ դէպքում երգի հիմքը՝ հիմնական երգը, մնում է նոյնը, սակայն եղանակաւորման որոշ նրբութիւններ նոյն հիմքի վրայ կարող են այլ տարբերակ ունենալ: Կամ խազագրող միջնադարեան երաժիշտն անգիր գիտի երգը որոշակի մանրամասնութեամբ, բայց խազագրում է հիմնական ելեւէջները, եղանակի հիմքերը՝ պարզ խազերով: Օրինակ՝ պարոյկը, որ բաղկացած է շեշտի եւ բութի գումարից եւ ցոյց է տալիս ձայնի վերելքն ու վայրէջքը կամ վերից վար էջքը, կարող է, նայած երգի ոճին, բառերի իմաստին, զգացմունքին, արտայայտուել տարբեր ձեւերով՝ ըստ էութեան մնալով նոյնը: Օրինակ՝ վերոյիշեալ շարականում Կոմիտասը նշել է այդ տարբերակները.



www.naregatsi.org

Ահա երեւում է խազերի վերծանութեան կոմիտասեան սկզբունքը: Պէտք է իմանալ.

1. բուն բանալին դիմող ձայնն է (սրա համեմատ որոշւում են հիմնական խազաստիճանները),

2. բանալի է նաեւ քառունակի սկզբունքը (նայելով մեղեդու ընթացքին՝ պէտք է ընտրել, թէ տուեալ խազը ո՛ր քառունակին է աւելի ներդաշնակ),


3. գործածական խազերից իւրաքանչիւրի ձայնային, ձայնելեւէջային նշանակութիւնը,

4. տարբերակման (իմպրովիզացիայի) առկայութիւնը:

Ահա Կոմիտասի վերծանած շարականը՝ իր իսկ կողմից արուած տարբերակումներով եւ տեղ-տեղ քառունակի երկու տարբերակի կիրառումով.



www.naregatsi.org



Տեսնում ենք, որ միմեանց յաջորդող երկու պարոյկի դէպքում երկրորդ պարոյկը մէկ աստիճան իջնում է:

Վերծանութեան յաջորդ օրինակները տարբեր տների հատուածներ են մէկ շարականից (կրկին Աւագ օրհնութիւնների շարքից): Նախ բերենք նոյն հատուածը Նիկողայոս Թաշճեանի գրառմամբ (արուած է 19-րդ դարում բանաւոր աւանդութիւնից).




www.naregatsi.org

Կոմիտասն ընտրել է այդ շարականը, որովհետեւ այն կարծես բացառութիւն է բոլոր Բձ-ի խազաւոր շարականների մէջ, քանի որ տունը սկսւում է բենկորճ խազով (տե՛ս «յոյս» բառը): Խազաւոր Բձ շարականներում անձամբ մեզ չի հանդիպել բենկորճ խազով սկիզբ, բացի այնպիսի օրինակից, որը տան կէսի սկիզբն է (այնտեղ բենկորճը խաղի հետ է): Եւ բենկորճ խազի նշանակութիւնն արդէն պարզած լինելով՝ Կոմիտասը կարծես ստուգել է այդ բացառիկ հատուածով, որտեղ բենկորճը, լինելով որպէս սկիզբ, իրենից առաջ չունենալով ազդող խազ, աւելի պարզ կարող է բացայայտուել: Եթէ Բձ-ի հիմնաձայնն է ժ՛, ապա եղանակի հանգչող բութը g-ն է եւ b-ն է, ուստի երբ վերջաւորող (տան կէս) բութից առաջ պարոյկ է, ապա պարոյկի ձայնը պէտք է իջնի դէպի g բութը կամ b բութը: Այս դէպքում Կոմիտասը երկու տարբերակն էլ գրել է՝ փակագծում տալով հետեւեալ տարբերակը.




Երկրորդ դարձուածքի վերջաւորութեան ձայնի (երկարի) համար եւս երկու տարբերակ է ներկայացրել. մէկը՝ պարզ, միւսը՝ աւելի եղանակաւոր, որը շատ գեղեցիկ է: Ընդհանրապէս, թէ՛ ասերգի, թէ՛ շարականների վերջաւորութիւնների համար գոյութիւն ունէին որոշակի երաժշտական բանաձեւեր, եւ այդ բանաձեւերը կա՛մ բերւում էին մանրամասն խազաւորուած կերպով, կա՛մ՝ երբեմն ուղղակի երկարի նշանով, որը կարող էր երգուել թէ՛ պարզ, թէ՛ եղանակաւոր կերպով:



Այսպիսով բերուած վերծանութիւնները միանգամայն համապատասխանում են Կոմիտասի ներկայացրած *խազերի բանալու* եւ խազերի նշանակութիւնների սկզբունքներին: Պարզ համեմատութեան համար ստորեւ տալիս ենք Կոմիտասի նշած խազերի ձայները նոտաներով (Բձ-ի հիմնաձայնը ընդունելով ժ՛):

www.naregatsi.org




Ահա երգի խազաւոր վանկի եւ խազի նշանակութեան համեմատութիւնը (չխազաւորուած ձայները տուեալ դէպքում երգում են հիմնաձայնով)։



Միւսները կախում ունեն նաեւ նախընթաց ձայնից։ «Մեր» բառի շեշտը բարձր է հիմնական շեշտաձայնից (f), որովհետեւ նախընթաց ձայնը շեշտաձայնի (f) ձայնն է, որին հետեւում է շեշտ, այսինքն՝ բարձրացում։

www.naregatsi.org

Նոյնը վերաբերում է թուրի վերջին ձայնին յաջորդող խունճին (սա էջքի զօրութիւն ունի), դէպի վեր ուղղուած երկարին, որը բարձրանում է նախորդ ձայնի համեմատ:



Որեւէ շարական վերծանելու համար, պարզ է՝ նախ պէտք է ունենալ այդ խազաւորուած շարականը, ինչն այնքան դիւրին չէ, ինչպէս երեւում է առաջին հայեացքից: Վերծանուող նիւթը հարկաւոր է ճշտել, ստուգել, համեմատել եւ այլն, որովհետեւ տարբեր ձեռագրերում նոյն շարականի խազաւորումները զանազան տարբերութիւններ են ի յայտ բերում:

Նոյն շարականի խազաւորումը տարբեր ձեռագրերում կարող է լինել հետեւեալ տարբերութիւններով.

1. Խազաւորումը նման է. վանկերի վրայի խազերը համապատասխանում են միմեանց, սակայն մի օրինակում որոշ վանկերի վրայ բացակայում են խազեր, որ կան միւս օրինակում եւ հակառակը:


2. Խազաւորումը նման է, սակայն որոշ նշաններ տարբերւում են. մի օրինակում տուեալ վանկի վրայ շեշտերկար է, միւսում՝ թուր կամ այլ խազ:

3. Խազաւորման մօտ կէսը (ոչ յաջորդաբար) համապատասխանում է, կէսը չի համապատասխանում:

4. Զգալի տարբերութիւն կայ եւ այլն:


Այդ տարբերութիւնների պատճառներից են թերագրութիւնը, նման նշանների շփոթութիւնը եւ այլն, եւ, ի հարկէ, դպրոցների տարբերութիւնը: Հայ խազագիտութեան հրատապ խնդիրներից է ձեռագիր խազաւոր շարականների համեմատական հրատարակութիւնը:

www.naregatsi.org



www.naregatsi.org

Ա ա ա



Կոմիտասի ձեռագիրը. արտագրութիւն միջնադարեան ձեռագրից: Յունական երգ հայկական խազերով:

Ըստ Կոմիտասի, խազերի գաղտնիքը երեւան հանելու համար հարկաւոր է տիրապետել հետեւեալ ուսմունքներին ու գիտութիւններին.

1. Տառաչափութիւն
2. Վանկաչափութիւն, բառաչափութիւն, տողաչափութիւն
3. Առոգանութիւն
4. Շեշտադրութիւն
5. Կէտադրութիւն
6. Խազաչափութիւն
7. Խազագիտութիւն
8. Լեզուաբանութիւն (բառերի իսկական եւ հին առման)
9. Իմաստասիրութիւն (երկրաչափութիւն, թուաբանութիւն, աստղաբաշխութիւն, երաժշտութիւն)
10. Խազերի ծագման, զարգացման, անկման եւ արդի պատմութիւն
11. Համեմատական խազաբանութիւն եւ այլն:

Այս մասերից «առոգանութեան, շեշտադրութեան, կէտադրութեան» նիւթերը (թէ Կոմիտասի դիւանի, թէ տպագիր, թէ Մատենադարանի ձեռագիր աղբիւրների) հրապարակել ենք[4]: Ընդսմին, Կոմիտասի որոշ ամբողջական նիւթեր հրատարակել ենք ոչ թէ միատեղ, այլ «ցրուած»՝ գրքի

www.naregatsi.org

համապատասխան բաժիններում, քանի որ որեւէ մասնաւոր նիւթի առնչութեամբ ներկայացրել ենք բոլոր այլ աղբիւրները:

Մնացած մասով (տաղաչափութիւն, խազաչափութիւն, աստղաբաշխութիւն եւ այլն) նոյնպէս կան պահպանուած նիւթեր:

Բացատրենք, թէ վերոյիշեալ գիտութիւններն ու ուսմունքները մասնաւորապէս ինչ առնչութիւն ունեն խազերի հետ:

1. *Տաղաչափութիւնը*, տառաչափութիւնը, վանկաչափութիւնը եւ այլն, մասն են կազմում մի գիտութեան, որ կոչւում է չափաբանութիւն (այն իր մէջ ներառում է վանկ, ոտք, տող, տուն, տաղ կամ երգ միաւորները): Այն անմիջականօրէն կապ ունի ասերգի կամ երգի ռիթմերի հետ: Վանկաչափութիւնը նաեւ առոգանութեան մասն է կազմում:

2. *Առոգանութիւն* գիտութիւնը հարկաւոր է ասերգի վերականգնման համար: Ասերգը երգի եւ խօսքի միջին ձեւն է՝ երգելով խօսելն է կամ խօսքի եղանակաւոր տեսակն է, իսկ ասերգի աւելի եղանակաւոր տեսակը երգն է: Ուստի երգը վերականգնելու համար պիտի վերականգնել երգի հիմքը՝ ասերգը, այսինքն՝ առոգանութեան հիմքի վրայ պէտք է վերականգնել երգը, երգողական խազերի նշանակութիւնը: Կամ եւս՝ երգողական խազերի նշանակութիւնը պարզելու համար նախ պէտք է առոգանութեան մաս կազմող շեշտադրութեան ու տրոհութեան նշանների զօրութիւնը եւ մեր նախնեաց լեզուի շեշտադրութեան ու տրոհութեան օրէնքները քննել:

3. *Խազաչափութիւն* գիտութիւնը հարկաւոր է իմանալու համար՝ ինչ սկզբունքով է չափւում կամ որոշւում խազերի նշանակութիւնը, որովհետեւ խազերի տարբեր համակարգեր տարբեր սկզբունքներ ունեն (թէպէտ ունեն նաեւ ընդհանրութիւններ), եւ իւրաքանչիւր համակարգ ունի իրեն բնորոշ որեւէ օրինաչափութիւն:

4. *Խազագիտութիւնը* իր մէջ ներառում է համաշխարհային խազաբանական համակարգերը, նրանց ընդհանուր կապերն ու տարբերութիւնները եւ ընդհանրապէս այն ամէնը, ինչ առնչւում է խազերին:

5. *Լեզուն* (բառերի իսկական եւ հին իմաստները) հարկաւոր է, քանզի երգեցողութեան խազերի, առոգանութեան եւ տրոհութեան նշանների անուններն ինքնին յուշում են նրանց յատկանիշները կամ առաւել եւս՝ բուն նշանակութիւնը:

6. *Իմաստասիրութիւն* կամ փիլիսոփայութիւն ընդհանուր անուանումով հնում հանդէս են եկել քառեակ գիտութիւնները՝ երկրաչափութիւնը, թուաբանութիւնը, աստղաբաշխութիւնը եւ երաժշտութիւնը: Այս չորս գիտու-

4. Տե՛ս «Առոգանութիւն» հատորը:

www.naregatsi.org

թիւնները դիտուել են իբրեւ մէկ ամբողջութիւն, եւ հնում երաժշտատեսական համակարգը կառուցել են ըստ այդմ:

ա. *Երկրաչափութեան* օրէնքներում արտացոլւում է առոգանութեան նշաններից սուր շեշտի եւ է ծանր բութի փոխյարաբերութիւնը ուղիղ անկեան համեմատ. «Թէ մեծ լինի քան զուղիղն՝ կոչի բութ, եւ թէ փոքր քան զուղիղն՝ կոչի սուր» եւ այլն (այս մասին նիւթն ու վերլուծութիւնը մենք հրատարակել ենք»[5]:

բ. *Թուաբանութիւնն* առնչւում է չափաբանութեան (տաղաչափութեան) հետ, թուաբանութեամբ է բացատրւում նաեւ ներդաշնակութեան հիմքը, ձայների փոխյարաբերութիւնը եւ այլն:

գ. *Աստղաբաշխութեան* լեզուով բացատրւում է, օրինակ, ձայների, ձայնեղանակների բարդ համակարգը, ձայնեղանակների ճիւղաւորումները եւ այլն: Պարզագոյն օրինակ՝ ասւում է, թէ այսինչ մոլորակը այսինչերորդն է իր բարձրութեամբ, եւ այլ տեղ նշւում է, որ այսինչ ձայնեղանակը համապատասխանում է այդ մոլորակին: Դրանով իմանում ենք, թէ տուեալ ձայնեղանակի ձայնը ձայնանիշի որ աստիճանն է գրաւում իր բարձրութեամբ: Կան բարդ եւ շատ աւելի բարդ յարաբերութիւններ եւս:

դ. Երաժշտութեան առնչութիւնն ինքնին հասկանալի է: Երաժշտութիւնը նոյնիսկ բարձր էր դասւում մնացած գիտութիւններից՝ մեկնաբանուելով իբրեւ բոլոր գիտութիւնները համախմբող, իր մէջ ներառող:

7. *Խազերի ծագման, զարգացման, անկման ու արդի պատմութեան* ուսումնասիրութիւնը հարկաւոր է, որովհետեւ խազերի համակարգը եւ, ընդհանրապէս, երաժշտագիտական համակարգը, անշարժ չի մնացել, այն զարգացել է, փոխուել է, երբեմն իր մէջ ներառել է օտար տարրեր: Ստեղծուել են տարբեր ոճեր, տարբեր տեսակներ, որոնք պահանջում են համապատասխան քննութիւն ու վերծանութիւն:

8. *Համեմատական խազաբանութիւնն* ընդգրկում է.

ա. ներկայումս պահպանուած երաժշտական նիւթի համեմատութիւնը խազաւորուած համապատասխան երգի հետ,

բ. նոյն երգի տարբեր խազաւորումների համեմատութիւնը,

գ. խազերի տարատեսակների համեմատութիւնը,

դ. տարբեր ոճերի համեմատութիւնը,

ե. համեմատութիւնը օտար խազերի հետ եւ այլն:

Ստորեւ տալիս ենք խազերի ամբողջական ցուցակ, այն կազմել է Նկ. Թահմիզեանը՝ համեմատելով իրար հետ մի քանի ցուցակներ (Ա, Բ, Գ):

5. Նոյն տեղում:


www.naregatsi.org



ստորակէտ
միջակէտ
վերջակէտ
սուղ, գլոր
երկար, քաշ
շեշտ
բութ, դիր
պարոյկ, բեր
ոլորակ, ծոցբեր
փուշ, հարուկ (ըստ «Խ»-ի՝ զարկ)
սուր, լարն
թուր
խունճ, շերեփ
ծունկ
ծնկներ, ծընկիկք, ողոմանեակ
թաշտիկ
թաշտ
զարկ, կուռ զրեհիկ, առուդիր
խում, ղում
խոսրովային, քմազարդ
ստորադիր
վերադիր, յետ ձգէ
խաղ
վերնախաղ, խաղբեր /ըստ «Գ»-ի՝ խաղ/
ներքնախաղ, աքիվեր, դող
քարքաշ
բենկորճ, բենկորճայ, կորճայ
էկորճ, էկորճայ, խածբեկ, հար, խողող
ձակորճ, ձակորճայ, խածլէ, հարկորճայ
վանկ, տակն /հետագայում՝ մենկորճ/
փաթութ, հանգոյց
յէ /հետագայում՝ կիսափաթութ/
լերկ
առանձնատրոպ /ըստ «Ա»-ի՝ հուհայ/
քմատրոպ /ըստ «Ա»-ի՝ փաթութ, ըստ «Բ»-ի՝ հուհայ/
ծանրատրոպ
թագատրոպ, թագաւորատրոպ
բարձրահարեր
վերքաշ
միմնաւոր
կըտուէ
բազմեղանակ

www.naregatsi.org

Այս նշանների շարքը կարելի է լրացնել: Դրանք ունեն իրենց տարատեսակներն ու նրբութիւնները (օրինակ՝ առոգանութեան նշանների տարատեսակներ):



Կոմիտասի ձեռագիրը

www.naregatsi.org

